

ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՀՈՐԻՉՈՆ

ՅԱԽԵԼՈՒԱԾ «ՀՈՐԻՉՈՆ» ՇԱՐՔԱԹԱԹԵՐԹԻ

Մայիս 2026

ՄԵՐ ԽՕՍՔԸ

Սիրելի աշակերտներ,

Մայիս ամսուան մէջ կը նշենք մայրերու տօնը:

Մայրերը մեր առաջին դաստիարակներն են: Մայրերը իրենց անհուն սիրով, իրենց օրօրներով ու երգերով մեզի կը փոխանցեն մեր մայրենի լեզուն եւ մեր ազգային ոգին: Անոնք կը քաջալերեն մեզ ըլլալու բարի, ազնիւ, համբերատար... ըլլալու տիպար մարդ: Իրենց լաւ օրինակով, մեզի կը սորվեցնեն սիրել լաւը ու յարգել մեծերը:

Մայրերը անձնուէր են: Անոնք յաճախ մեծ զոհողութիւններ կ'ընեն, որպէսզի մենք լաւ ապագայ մը ունենանք:

Որպէս տիպար մարդ մեր կազմաւորման մէջ, մեծ է դերը նաեւ մեր հայրերուն: Նկատի ունենալով, որ Յունիսին լոյս պիտի չտեսնէ Հորիզոն Մանկապատանեկանը, կանխաւ կը շնորհատրենք նաեւ բոլորիս հայրերու տօնը:



Մայիսին կը նշենք նաեւ երկու ազգային յաղթանակներ: Հայաստանի Առաջին հանրապետութեան հրչակումը, որ տեղի ունեցաւ 28 Մայիս 1918-ին եւ Շուշիի ազատագրումը, որ տեղի ունեցաւ 9 Մայիս 1992-ին:

Մեր յաղթանակները կը հզօրացնեն մեզ: Մեր զինուորներուն արձանագրած հերոսութիւնները ինքնավստահութիւն կը ներշնչեն մեզի:

Շնորհիւ մեր դաստիարակութեան, մեր ժողովուրդը խաղաղասէր, աշխատասէր ու ստեղծագործ է. քանդող ու կոուազան չէ եւ շատ լաւ գիտէ պաշտպանել իր հայրենի հողն ու իր իրաւունքները:

Անցեալին թշնամին տեղահանութեամբ ու ցեղասպանութեամբ որոշեց ոչնչացնել մեզ ուզելով մէկ հայ ձգել աշխարհի երեսին. բայց ջաջողեցաւ: Այսօր մենք կանք. կը խօսինք, կը գրենք ու կ'երգենք հայերէն. կ'ապրինք մեր մշակոյթով, մեր եկեղեցիներով, մեր դպրոցներով եւ մեր կեդրոններով:

Ներկայիս նոյն թշնամին, նոր ձեւերով կ'ուզէ ոչնչացնել մեզ: Քանդելով մեր մշակութային ժառանգութիւնը (քանդելով մեր եկեղեցիները, մեր յուշարձանները...) եւ հարուածելով մեր ազգային հաւաքական յիշողութիւնը (բաժնել մեզ մեր արմատներէն, հարցականի տակ առնել Հայոց Յեղասպանութիւնը, վերցնել մեր հայրենիքը խորհրդանշող Արարատը մեր աչքերէն, անարգել մեր հոգեւորականները, սահմանելով անոնց դերը: Մինչդեռ հայ եկեղեցին ունի ազգային դիմագիծ եւ իր մասնակցութիւնը կը բերէ մեր ազատագրական պայքարին մէջ):



Սիրելի աշակերտներ, չձգենք որ թշնամին հասնի իր երագին: Մնանք կառչած մեր արմատներուն եւ մեր սովորութիւններուն. պահենք մեր լեզուն մեր շուրթերուն, եւ յաճախենք հայկական եկեղեցի, վարժարան ու կեդրոններ:

Մնանք պահանջատէր եւ պահենք Արարատը մեր մտքերուն եւ սրտերուն մէջ:

ՄԱՅԻՍ 28

Դարերու ընթացքին, աշխարհի տարածքին, ժողովուրդներ պայքարած են ունենալու իրենց ազատ հայրենիքը: Նոյնը եղած է պարագան հայ ժողովուրդին: Հայը աշխարհի հին ժողովուրդներէն մէկը ըլլալուն, պատմութեան ընթացքին ունեցած է թէ՛ փառքի, թէ՛ գերութեան ժամանակներ: Մերթ ունեցած է թագաւորներ եւ լայնատարած հայրենիք, մերթ եղած է գերեվարուած ու անիշխան: Դժուար ու ծանր եղած է հայուն կեանքը, երբ մեծ պետութիւններ կամ արշաւող ցեղախումբեր ուզած են կոտորել մեզ, քանդելով մեր բերդերն ու մեր քաղաքները, կործանելով մեր վանքերը, բաժնելով մինչեւ մեր ժողովուրդն ու մեր լեզուն՝ իր արեւելահայերէն ու արեւմտահայերէն տարբերակներով:

Այդ անբարենպաստ պայմաններէն ամէնէն դաժանը եղած է, երբ հայը 600 տարի մնացած է Օսմանեան լուծին տակ, ապրելով որպէս երկրորդական քաղաքացի՝ զրկուած իր իրաւունքներէն: Այդ շրջանին, հայ ֆետայիներ ապստամբութիւններ կազմակերպած են: Իսկ հայ կղերական եւ մտաւորական յայտնի դէմքեր մեծ աշխատանք տարած են բարձրացնելով իրենց ձայնը երոպական յառաջդիմած երկիրներու մօտ: Այդ աշխատանքին իբրեւ արդիւնք թուրքերը խոստացած են բարեկամութիւն եւ հաւասարութիւն հայ եւ թուրք ժողովուրդներուն միջեւ: Բայց բարեկամութեան փոխարէն թուրքերը կազմակերպեցին ջարդ ու ցեղասպանութիւն, իսկ հաւասարութեան փոխարէն անոնք կողոպտեցին հայուն, տէր դառնալով անոր տան եւ ունեցուածքին:



1915-ի արհիւնոտ օրերէն 3 տարիներ ետք, 28 Մայիս 1918-ին, հայ ժողովուրդը Արամ Մանուկեանի առաջնորդութեամբ եւ հայ զօրավարներու ղեկավարութեամբ, միասնական ուժերով 3 մեծ ճակատամարտեր մղեց թրքական բանակին դէմ եւ յաղթեց:

Սարդարապատ, Բաշ-Ապարան եւ Ղարաբաղիսէ. այս 3 մեծ ճակատամարտերու յաղթական արդիւնքին շնորհիւ կերտուեցաւ Հայաստանի Առաջին Հանրապետութիւնը:

Ամէն տարի հպարտութեամբ նշենք Մայիս 28-ն, որպէս Հայաստանի Առաջին Հանրապետութեան հիմնադրման օր: 1918 Մայիս 28-ի անկախութիւնը հիմքը դարձաւ Հայոց ազատ ու անկախ պետականութեան վերականգնման, որ տեղի ունեցաւ տարիներ ետք, 21 Սեպտեմբեր 1991-ին:

Ամէն տարի հպարտութեամբ նշենք Արամ Մանուկեանի անունը, որովհետեւ անոր ղեկավարութեամբ է, որ հայութիւնը՝ միասնական, իր հերոսական ինքնապաշտպանութեամբ դէմ դրաւ թուրք բանակին, որ պարտուած նահանջեց:

Հպարտութեամբ նշենք ու խոնարհինք Մայիս 28-ի բոլոր հերոսներուն առջեւ: Գիտակցինք անոնց տարած մեծ զոհողութեան. աշխատինք պահպանել մեր հայրենիքի անկախութիւնը իր գծուած սահմաններով, առանց ոչ մէկ դիպ զիջելու թշնամիին: Ըլլանք միասնական, որպէսզի զօրաւոր ըլլայ մեր բանակը եւ բարեւալուին մեր հայրենիքի տնտեսական խնդիրները եւ ընկերային վիճակը:

ԱՐՑԱԽ ԵՒ ՇՈՒՇԻ

Հին ժամանակներէն ի վեր, Արցախը կարեւոր տեղ գրաւած է Հայաստանի պատմութեան մէջ: Հայոց կայսրութեան հզօրագոյն թագաւոր Տիգրան Մեծը (Ք.ա. 95-55), որ կը յիշուի նաեւ որպէս թագաւորներուն թագաւորը, Արցախի մէջ հիմնած է Տիգրանակերտ անունով քաղաք մը:

Արշակունիներու օրով, Արցախը Մեծ Հայքի 15 նահանգներէն մէկը եղած է: Ան կը գտնուէր Հայկական լեռնաշխարհի հիւսիս-արեւելքը, ունէր 12 գաւառներ եւ 11.528 քառակուսի քիլոմետր տարածք:

Ք.ե. առաջին դարուն, երբ Հայաստանի մէջ քարոզիչներ կը տարածէին քրիստոնէութիւնը, Յիսուսի 72 աշակերտներէն՝ Սուրբ Դաղը եւ Եղիշէն Արցախի մէջ քարոզած են եւ հոն՝ նահատակուած: Աւելի ուշ, իրենց անունով է, որ կառուցուած են Դաղի եւ Եղիշէ առաքելի վանքերը:

Դարերու ընթացքին, Արցախի մէջ կառուցուած են բազմաթիւ եկեղեցիներ:

19-րդ դարուն, ամէնէն կարեւոր եկեղեցիներէն մէկը եղած է Շուշիի Ղազանչեցոց Սուրբ Ամենափրկիչ եկեղեցին: Ան իր իւրայատուկ տեղը գրաւած է պատմութեան մէջ, շնորհիւ իր ճարտարապետական առանձնայատկութիւններուն:



Շուշիի Ղազանչեցոց Սուրբ Ամենափրկիչ եկեղեցին

Ամէն տարի, Մայիսի 9-ին կը նշենք Շուշիի ազատագրումը, որ տեղի ունեցաւ 1992-ին, անմահներու հերոսական կոհիներուն շնորհիւ:

Շուշին եղած է առեւտրական, արհեստագործական եւ մշակութային նշանաւոր քաղաք, ծանօթ իր մանկավարժական եւ երաժշտական համալսարաններով:

Այսօր, գերիի պէս, ան կը գտնուի Ատրպէյճանի սահմաններէն ներս, մեր արցախցի 23 քաղաքական բանտարկեալներուն հետ միասին:


Պայքարը չէ վերջացած ու կը շարունակուի:

Աշխարհի տարածքին Հայ դատի յանձնախումբեր հսկայական աշխատանք կը տանին այս գծով:

ԻՆՉ Է ՀԱՅ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹԻՒՆԸ

Հայ մշակութային ժառանգութիւնը հայ ժողովուրդի նիւթական եւ աննիւթական արժէքներու ամբողջութիւնն է, որ հայը կերտած է իր հողին վրայ, իր մշակոյթին մէջ դարերու ընթացքին եւ կը փոխանցուի սերունդէ սերունդ: Հայ մշակութային ժառանգութիւնը այդ ամբողջութիւնն է, որ երբ տեսնենք կամ երբ լսենք, կ'ըսենք հայկական է, որ կու գայ մեր պապերէն եւ մենք մեր կարգին կը փոխանցենք յաջորդ սերունդներուն:

Ժողովուրդի մը նիւթական արժէքներէն են օրինակ՝ յուշարձանները, եկեղեցիները, շէնքերը, քաղաքները, ճարտարապետութիւնը, առարկաները եւ արն:



Իսկ աննիւթական արժէքներէն են ասանդոյթները, լեզուն, արուեստը իր բոլոր ոլորտներով:

Ներկայիս հսկայական աշխատանք կը տարուի պահպանելու Արցախի մշակութային ժառանգութիւնը: Այս գծով Համազգայինի Հայաստանի եւ Արցախի գրասենեակներու նախաձեռնութեամբ՝ Համազգայինի Կեդրոնական վարչութեան աջակցութեամբ, 2023-ին լոյս տեսաւ՝ «Արցախ, վտանգուած ժառանգութիւն» պատկերագիրքի առաջին հատորը:

Պատկերագիրքը կազմած է Րաֆֆի Քորթոշեան, որ Հայկական Ճարտարապետութիւնը Ուսումնասիրող Հիմնադրամի փոխտնօրէնն է:


Յանձնարարելի է ունենալ այս պատկերագիրքը ու ճանչնալ մեր պապերէն մեզի հասած ժառանգութեան մասին: Գիրքին յաջորդ հատորները լոյս պիտի տեսնեն անելի ուշ:

ԻՆՉ ԿԸ ԿԱՏԱՐՈՒԻ ԱՅՍՕՐ ԲՈՒՆԱԳՐԱՌՈՒԱԾ ԱՐՑԱԽԻ ՄԵՋ

Ինչպէս 111 տարիներ առաջ, 1915-ին Օսմանեան պետութիւնը ծրագրեց ու կազմակերպեց հայերու տեղահանութիւնն ու ջարդը, նոյնպէս Սեպտեմբեր 2023-ին թուրքերու եղբայր ազերիները, պետական մակարդակով ծրագրեցին եւ իրականացուցին Արցախի հայութեան բռնի տեղահանումը: Իսկ այսօր, շարունակելով ծրագրուած աշխատանքները, ազերիները կը կազմակերպեն հայերու մշակութային ժառանգութեան ցեղասպանութիւնը:

Անոնք ամէն գնով աշխատանք կը տանին ամբողջովին քանդելու բռնագրաւուած Արցախի բոլոր յուշարձաններն ու եկեղեցիները: Մինչ օրս, անոնք հիմնովին ակերած են. Ստեփանակերտի Սուրբ Յակոբ եկեղեցին, Շուշիի Սուրբ Յովհաննէս Մկրտիչ եկեղեցին, Տանձատափի Մոխրենես գիւղի Սուրբ Սարգիս եկեղեցին, Բերձորի Սուրբ Համբարձման եկեղեցին, Մեխակաւանի Զօրաւոր Սուրբ Աստուածածին եկեղեցին եւ այլ բազմաթիւ սրբավայրեր:

Զարմանալի է, թէ ինչպէս անցեալին, այսօր եւս յառաջացած ու զարգացած այս ժամանակաշրջանին մէջ, մարդկային իրաւունքեր պաշտպանող քաղաքակիրթ ժողովուրդներու աչքերուն առջեւ կը կատարուին այս ամէնը:



Սրբեկանակերտի Սուրբ Յակոբ եկեղեցին կար ու չկայ հիմա

Զարմանալի է, թէ ինչպէս աշխարհը լուռ կը դիտէ:

Դասեր քաղենք անցեալէն: Մենք ենք, որ քով-քովի գալով գիրար պէտք է լսենք ու իրարու օգնենք: Օտարներ միշտ իրենց շահերը կը հետապնդեն միայն:

Կարդանք եւ իմանանք, թէ ինչ կը կատարուի մեր հայրենի հողին վրայ: Մեր շրջապատին մէջ, խօսինք այս մասին ու պահանջենք մեր իրաւունքները, որովհետեւ ազգային, հոգեւոր ու մշակութային ժառանգութիւններու ոչնչացումը, յանցագործութիւնն է:


ԱԶԵՐԻՆԵՐ ՈՉՆՉԱՑՈՒՑԻՆ ԶՈՒՂԱՅԻ ԽԱԶՔԱՐԵՐԸ

Զուղան կը գտնուի Նախիջեանի մէջ (որ նախապէս հայկական նահանգներէն մէկն էր եւ ներկայիս կը գտնուի Ատրպէյճանի տիրապետութեան տակ), Արաքս գետի ափին:

Զուղայի գերեզմանատունը հարուստ էր հայկական միջնադարեան արուեստի ամէնէն նշանաւոր խաչքարերով:

Զուղայի խաչքարերը ծանօթ էին աշխարհին իրենց եզակի եւ հարուստ զարդաքանդակներով, երկրաչափական նուրբ նախշերով եւ իւրայատուկ պատկերաքանդակներով, որոնցմէ ամէն մէկը կը պատմէր հայկական մշակոյթի, կրօնի եւ հայու առօրեային մասին:


1970-ական թուականէն մինչեւ 2005 թուականը, ազերիները ամբողջ աշխարհի աչքին առջեւ հետեւողական աշխատանքով ոչնչացուցին Նախիջեանի Զուղայի գերեզմանատան բարձր արժէք ներկայացնող անելի քան 10 հազար խաչքարեր:



2005 Դեկտեմբերին, ազերի զինուորականներ Զուղայի քանդուած խաչքարերու վերջին կտորները բեռնակառքերով տարին ու նետեցին Արաքս գետը, վերջնականապէս ջնջելով հայերու հետքը Զուղայէն:

Օրին, հայերու բարձրացուցած ձայներուն դիմաց աշխարհը արձագանգեց միայն դատապարտումներով: Զուղայի մէջ, մշակութային եղեռն մը կատարուեցաւ, եւ ոչ մէկ քաղաքակրթութեամբ պետութիւն անոր դէմ կեցաւ:

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՒ ԱՄԷԼԵՆ ՀԻՆ ՔԱՐՏԵԱԸ



Աշխարհի ամենին հին քարտեղ ծանօթ է նաեւ որպէս Բաբելոնեան քարտեղ: Այս քարտեղը գրուած ու գծուած է Ք.ա. 6-րդ դարուն կալէ սալիկի մը վրայ: Թանկագին այս քարտեղը գտնուած է Իրաքի տարածքին, 19-րդ դարուն: Ներկայիս կը պահուի Անգլիոյ թանգարանին մէջ:

Ըստ հայ աշխարհագրագէտ եւ քարտեագէտ Ռուբէն Գալսեանի, քարտեղը ցոյց կու տայ, թէ աշխարհը կլոր է շրջապատուած ջուրերով, որոնց մէջ կան կղզիներ: Աշխարհի շուրջ՝ ջուր բաժինը արձանագրուած է bitter, որ կը նշանակէ դառն, դաժան, խիստ:

Կ'ենթադրուի, թէ քարտեղը ցոյց կու տայ հին ժամանակաշրջանի յայտնի աշխարհը, որուն կեդրոնն էր Բաբելոնը: Քարտեղին վրայ յիշուած է Ասորեստանը եւ վերի աջ անկիւնը նշուած է Հայաստանը՝ այդ ժամանակաշրջանի միակ երկիրը, որ տակաւին գոյութիւն ունի նշուած է Հայաստանը՝ այդ ժամանակաշրջանի միակ երկիրը, որ տակաւին գոյութիւն ունի նշուած է Հայաստան եւ Ուրարտու անունները յաճախ փոխարինուած են:

Բաբելոնի, Ասորեստանի եւ Հայաստանի կողքին, փոքր շրջաններով պատկերուած են 7 այլ քաղաքներ, որոնցմէ են Հարրանը եւ Դերին:

Սալիկի չափը 8 x 12,5 սանդի մետր է:

Սալիկի ետեւի գրութեան մէջ նշուած է աշխարհը շրջապատող ծովերու 7 կղզիներուն մասին, ինչպէս նաեւ այնտեղ ապրող զարմանալի արարածներուն մասին: Կղզիները պատկերուած են եռանկիւններով, որոնց մեծ մասը վնասուած են եւ անընթեռնելի են:

ՄԻ ԽԱՌՆԷՔ ՄԵՉ
Վահան Տէրեան

Մի խառնէք մեզ ձեր վայրի, արջի ցեղերին, -
Մեր երկիրը աներուած, բայց սուրբ է եւ հին:

Որպէս լեռն է մեր պայծառ տեսել հազար ձիւն,
Այնպէս նոր չեն մեզ համար դաւ ու դառնութիւն:

Բաբելոնն է եղել մեր ախոյեանը՝ տէս, -
Անհետ կորել, անցել է չար մշուշի պէս:

Ասորիքն է եղել մեր թշնամին ահա՛
Դաշտ է տեղը, եւ չկայ քար քարի վրայ:

Ամրակուտ է մեր հոգին դարերի զաւակ՝
Շատ է տեսել մեր սիրտը անք ու կրակ:

Շատ է տեսել երկիրն իմ ցաւ ու արհաւիրք,
Լաց է այնտեղ ամէն երգ եւ ողբ ամէն գիրք:

Գերուած ենք մենք, ո՛չ ստրուկ, գերուած մի արծիւ,
Չարութեան դէմ վեհսիրտ միշտ, վատի դէմ ազնիւ:


Բարբարոսներ կը գան ու կ'անցնեն անհետ,
Արքայական խօսքը մեր կը մնայ յաւէտ:

Չի հասկնայ ձեր հոգին եւ ծոյլ, եւ օտար,
Տաճար է մեր երկիրը, սուրբ է ամէն քար:

Եգիպտական բուրգերը փոշի կը դառնան,
Արեւի պէս, երկիր իմ, կը վառուես վառման:

Որպէս փինիկ կրակից կ'ելնես, կ'ելնես նոր
Գեղեցկութեամբ ու փառքով վառ ու լուսաւոր:

Կանգնիր հպարտ, որպէս լոյս լեռն է մեր կանգուն,
Արիացիր, սիրտ իմ, ել հաւատով տոկուն:



Վահան Տէրեան



ՄԵՐ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԸ ԿԸ ԳՐԵՆ

«Հորիզոն Մանկապատանեկանը» բոլոր
հայ պատանեաներու թերթն է:

Գրեցէ՛ք մեզի, որ յետոյ հաճոյքով կարդաք
ձեր ուղարկած գրութիւնները:

Ուրախութեամբ կը յայտնենք, թէ
Թորոնթոյի ՀՕՄ-ի Ամէնօրեայ վարժարանի
Գոլուեան նախակրթարանի Դ. կարգի հայերէնի
դասատու տիկին Զանի Շահինեան-Մետրոպեանի
աշակերտուհիներէն՝ Քնար Թորոսեան եւ Ծիրանէ
Սարգիսեան մեզի ուղարկած են հետեւեալ
տողերը:

Պատուհանէս դուրս նայեցայ:
Տեսայ ծառերը ինչպէս կը շարժէին իրենց
տերեւները:
Անոյշ օդ մը եկաւ ինձի: Կ'առնէի արեւին հոտը:
Պայծառ էր երկինքը, ճիշդ Հայաստանի երկինքին
պէս:
Կանաչ էր շուրջս: Նայեցայ շէնքերուն, որոնք
բարձր էին եւ անուշիկ:
Բայց վերջը... թուրքերը եկան եւ քանդեցին
ծառերը. քանդեցին նաեւ շէնքերը, որոնց մէջ
մարդիկ ուրախութիւն կ'ընէին... անոնց ալ առին
տարին...
Գնաց ամէն ինչ...

Քնար Թորոսեան
(9 տարեկան)

Մենք հայ ենք

Հայ մշակոյթը պէտք է պահենք,
Որ մեր ազգը չջնջուի:
Տեսաբար յիշենք,
Որ մենք հայ ենք.
Մենք հզօր ենք
Մեր պատմութեամբ
Ու հարուստ ենք մշակոյթով:

Ծիրանէ Սարգիսեան
(9 տարեկան)



Վահան Տէրեան ծնած է 1885-ին, Զաւախքի մէջ եւ մահացած՝ 1920-ին, 35 տարեկանին:
Եղած է տաղանդաւոր բանաստեղծ: Իր սիրային բանաստեղծութիւններուն մէջ արտայայտած է իր
նուրբ ու քնքուշ զգացումներ: Իր հայրենասիրական բանաստեղծութիւններով յոյս եւ ուժ ներշնչած
է իր ժողովուրդին:

Իր այս բանաստեղծութեամբ Տէրեան գովերգած է իր հայրենիքը: Անդրադարձած է
հայերուն նման հին ժողովուրդներու, ինչպէս՝ բաբելոնացիներն ու ասորիները, որոնք կորած են
սակայն եւ չկան: Բանաստեղծը նշած է թէ «Ամրակուտ է մեր հոգին», այսինքն քաջ է հայ ժողովուրդը,
որ դարերու ընթացքին հերոսաբար կռուած է թշնամիներու հզօր բանակներուն դէմ ու պահած է
իր ինքնութիւնը: Տէրեան շունչ տալով իր ժողովուրդին, նմանցուցած է զայն փինիկ թռչունին, որ
կրակէն այրելէ ետք, իր մոխիրներէն վերածնած է: Այսինքն Հայաստանը շատ պատերազմներ
տեսած է, բայց հայը այդ ցաւը, զրկանքն ու բոլոր դժուարութիւնները յաղթահարած, ապրած ու
գոյատեւած է:

Իր վերջին տողերուն մէջ, ան յոյս կու տայ հայուն ու կը հրահանգէ կանգնիլ հպարտ,
ինչպէս մեր լեռը Արարատ. եւ կոչ կ'ընէ հայ ժողովուրդին հաւաքելու իր ուժերը, զօրանալու եւ
հաւատքով տոկուն ոտքի կենալու:

Այս բանաստեղծութիւնը որքան հարազատ կը ինչէ այսօր: Արիացէ՛ք հայեր:

Համագայինի Քեպեգի «Սանահին» մասնաճյուղի կազմակերպությամբ, ամեն ամսու 3-րդ ուրբաթ օրը, ժամը 6:00-7:00, Կեօնճեան կեդրոնէն ներս տեղի կ'ունենայ, «Փոքրերու Պատմութեան ժամ» յայտագիրը, 4-էն 8 տարեկան երեխաներու համար: Մուտքը ազատ է. սակայն պէտք է արձանագրուիլ յայտարարութեան վրայ նշուած QR նշանակապը (code-ը) օգտագործելով: (Յայտագիրը դադար կ'առնէ ամառնային արձակուրդին):

Ուրբաթ, 17 Ապրիլին, Սիլվի Օքճեան ներկայացուց Զանի Շահինեան-Մետրոպեանի «Վարագ կ'այցելէ Հայաստան» պատմութիւնը: Փոքրիկները ուշադրութեամբ հետեւեցան եւ մտքով փոխադրուեցան Հայաստան:

Ստորեւ կը տեսնէք պատմութեան ասարտին, փոքրիկներու ստեղծագործական աշխատանքէն օրինակներ, որպէս պատասխան հետեւեալ հարցումին. «Եթէ օդանաւը առնելով Հայաստան այցելես, ո՞ր կ'ուզես երթալ առաջին անգամ»:



Քրիսթէլ Մատթունի



Արրահամ Դանիէլեան



Մարիա Սուլթանեան



Վէմ-Գէորգ Քիլերճեան



Մելանիա Զաքարիա



Սեանա Ղեւոնդ



Ռոզի Պազալեան



Արամ Կարապետեան

Ո՞Վ Կ'ՈՒՋԷ ԸԼԼԱԼ ԲԱԶՄԱԳԵՏ

Մայիս ամսուան հարցումներուն պատասխաններուն ժամկէտն է 30 յունիս 2026: Հետեւաբար սիրելիներ, արձանագրեցէք զանոնք թուղթի մը վրայ, նշելով ձեր անունն ու ձեր յաճախած դպրոցին անունը: Յետոյ ուղարկեցէք այդ թուղթը Հորիզոնի խմբագրատուն՝ 3401 Olivar Asselin, Montréal, Québec, H4J 1L5

1- Ո՞ր ճակատամարտերու յաղթական արդիւնքին շնորհիւ կերտուեցաւ Հայաստանի Առաջին Հանրապետութիւնը:

- ա) Սարդարապատ եւ Աւարայր:
- բ) Սարդարապատ եւ Ղարաքիլիսէ:
- գ) Սարդարապատ, Բաշ-Ապարան եւ Ղարաքիլիսէ:

2- Ինչո՞ւ Մայիս 28-ին հպարտութեամբ պէտք է նշենք Արամ Մանուկեանի անունը:

- ա) Որովհետեւ Արամ Մանուկեանի ղեկավարութեամբ հայութիւնը միասնական, հերոսական ինքնապաշտպանութեամբ դէմ դրաւ թուրք բանակին, որ պարտուած նահանջեց:
- բ) Որովհետեւ Արամ Մանուկեան լեզու գտաւ դրացի երկիրներուն հետ:
- գ) Որովհետեւ Արամ Մանուկեանի ղեկավարութեամբ հայոց բանակը հասաւ մինչեւ Կիլիկիա:

3- Ո՞ր թուականին հայերը միացան եւ կերտեցին Հայաստանի Առաջին Հանրապետութիւնը:

- ա) 9 Մայիս 1918-ին:
- բ) 9 Մայիս 1992-ին:
- գ) 28 Մայիս 1918-ին:

4- Ե՞րբ գրուած ու գծուած է աշխարհի ամէնէն հին քարտէսը:

- ա) Ք.ա. 6-րդ դարուն:
- բ) Ք.ե. 6-րդ դարուն:
- գ) 19-րդ դարուն:

5- Ո՞ր երկիրը նշուած է աշխարհի ամէնէն հին քարտէսի վերի աջ անկիւնը:

- ա) Բաբելոնը:
- բ) Հայաստանը:
- գ) Ասորեստանը:

6- Աշխարհի ամէնէն հին քարտէսին վրայ նշուած են այդ ժամանակաշրջանի երկիրներու անունները, որոնք բոլորն ալ կորսուած են եւ գոյութիւն չունին այլեւ, բացի մէկ երկրէ: Ո՞րն է այդ երկիրը:

- ա) Բաբելոնը:
- բ) Ասորեստանը:
- գ) Հայաստանը:

7- Ո՞ր թուականին հայ քաջեր հերոսական կռիւներէ ետք ազատագրեցին Շուշին:

- ա) 28 Մայիս 1918-ին:
- բ) 9 Մայիս 1992-ին:
- գ) 9 Մայիս 1988-ին:

8- Ազերիները բռնագրաւուած Արցախի յուշարձաններն ու եկեղեցիները կը քանդեն: Անոնք վերջերս Ստեփանակերտի ո՞ր եկեղեցին քանդեցին:

- ա) Սուրբ Համբարձման եկեղեցին:
- բ) Սուրբ Յովհաննէս Մկրտիչ եկեղեցին:
- գ) Սուրբ Յակոբ եկեղեցին:

9- Ի՞նչ եղան Ջուղայի գերեզմանատան 10 հազար խաչքարերը, որոնք ծանօթ էին աշխարհին իրենց եզակի եւ հարուստ զարդաքանդակներով եւ երկրաչափական նուրբ նախշերով:

- ա) 1970-ական թուականէն մինչեւ 2005 թուական ազերիները քանդեցին ու ոչնչացուցին այդ խաչքարերը:
- բ) Անգլիացիները փոխադրեցին այդ խաչքարերը Անգլիա:
- գ) Ազերիները վերանորոգեցին այդ խաչքարերը եւ շրջանը վերածեցին գեղեցիկ թանգարանի մը:

10- «Մի խառնէք մեզ» բանաստեղծութեամբ, Վահան Տէրերան կոչ կ'ընէ հայ ժողովուրդին հաւաքելու իր ուժերը, զօրանալու եւ հաւատքով տոկոսն ոտքի կենալու Արարատ լեռան պէս:

- ա) ճիշդ:
- բ) Միայ:



Մանկապատանեկան Հորիզոնը կը հովանաւորեն ՀՕՄ-ի Գանատայի Շրջանային վարչութիւնը եւ Գանատայի շրջանի իր 10 մասնաճյուղերը

Հեռաձայն (514) 332-3757
 Email: sylva@horizonweekly.ca
 Խմբագրութիւն՝ Անահիտ Պալեանի
 Ձեռայագք՝ Լորի Խաչէրեանի